



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 հունիսի 2022 թվականի թիվ 210-Ա

#### «ԿԱԲԱՐԿՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի հունիսի 7-ի նիստում, քննարկելով «Կաբարկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ վարույթ հարուցելու մասին հարցը,

### Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովի նախագահի պաշտոնակատարի 2022 թվականի մայիսի 6-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 61-Ա հրամանի հիման վրա իրականացվել է «adjarabet.am» ֆեյսբուքյան էջի արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 61 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **Թիվ 61 արձանագրություն**):

Թիվ 61 արձանագրության համաձայն՝ «adjarabet.am» ֆեյսբուքյան էջում հրապարակված են մի շարք գովազդներ, այդ թվում՝

1. «400 iPhone տասներեքներ, 6 թույն ամենազնաց, ինչպես նաև անսահմանափակ Mazda CX5 և քեշ ամենօրյա խաղարկություններում և՛ սպորտում, և՛ սլոթերում» բովանդակությամբ գովազդը, որին կից ներկայացված տեղեկության մեջ առկա է «անսահմանափակ Mazda-ներն ու քեշը կսպասեն քեզ ուղիղ եթերում» գրառումը.

2. «Հրաձիգներ ենք փնտրում, կրակոտ շահումներ ենք խոստանում, լիցքավորիր ատրճանակդ ու կրակիր մեզաշահումներ, 4 նոր բնակարան Երևանում, 4 շքեղ ամենազնաց, 400 iPhone 13 և անսահմանափակ Kia Seltos-ներ ամենօրյա խաղարկությանը: Շահիր օրական 4 անվճար շանսով, adjarabet.am միշտ ստացիր ավելին»

բովանդակությամբ գովազդը, որին կից ներկայացված տեղեկության մեջ առկա է «անսահմանափակ Kia Seltos-ներ ու քեշ՝ ամենօրյա խաղարկությանը» գրառումը:

Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի մայիսի 30-ի «Արտաքին դիտում իրականացնելու մասին» թիվ 96-Ա հրամանի հիման վրա իրականացվել է «adjarabet.am» ֆեյսբուքյան էջի արտաքին դիտում, որի արդյունքում կազմվել է «Արտաքին դիտման արդյունքների վերաբերյալ» թիվ 96 արձանագրությունը (այսուհետ նաև՝ **Թիվ 96 արձանագրություն**):

Թիվ 96 արձանագրության համաձայն՝ «adjarabet.am» ֆեյսբուքյան էջում հրապարակված են մի շարք գովազդներ, այդ թվում՝

1. «Մեկ չափիր, 5-ն էլ կտրիր, երկար մի մտածիր, կտրիր մրգերը ու տար լրիվ նոր Porsche, Range Rover, Mercedes, Jaguar, Lexus, Audi ու 400 iPhone, իսկ անսահմանափակ Mazda-ներն ու քեշը կսպասեն քեզ ամեն օր ուղիղ եթերում: Փորձիր բախտդ օրը 4 անգամ՝ անվճար, adjarabet.am միշտ ստացիր ավելին» բովանդակությամբ «Սլոթ Նինջա» անվանումով ակցիայի վերաբերյալ գովազդը (այսուհետ՝ **Գովազդ 1**), որին կից ներկայացված տեղեկության մեջ առկա է «անսահմանափակ Mazda-ներն ու քեշը կսպասեն քեզ ուղիղ եթերում» գրառումը, իսկ խաղարկության համար նախատեսված խաղասեղանին առկա է «Mazda CX5-եր ամեն օր» գրառումը:

2. «Հրաձիգներ ենք փնտրում, կրակոտ շահումներ ենք խոստանում, լիցքավորիր ատրճանակդ ու կրակիր մեզաշահումներ, 4 նոր բնակարան Երևանում, 4 շքեղ ամենազնաց, 400 iPhone 13 և անսահմանափակ Kia Seltos-ներ ամենօրյա խաղարկությանը, շահիր օրական 4 անվճար շանսով, adjarabet.am միշտ ստացիր ավելին» բովանդակությամբ «Վայրի Արևմուտք» անվանումով ակցիայի վերաբերյալ գովազդը (այսուհետ՝ **Գովազդ 2**), որին կից ներկայացված տեղեկության մեջ առկա է «անսահմանափակ Kia Seltos-ներ ու քեշ՝ ամենօրյա խաղարկությանը» գրառումը, իսկ խաղարկության համար նախատեսված խաղասեղանին առկա է «Kia Seltos-ներ ամեն օր» գրառումը:

Թիվ 96 արձանագրության համաձայն՝ Գովազդ 1-ը վերաբերում է «Սլոթ Նինջա» անվանումով ակցիային, որը գործել է 2022 թվականի փետրվարի 2-ից մինչև 2022 թվականի մարտի 1-ը ներառյալ: Նշված ակցիայի ընթացքում խաղաքարտերի կարմիր կամ սև լինելը գուշակելու միջոցով յուրաքանչյուր օր սահմանափակ թվով մասնակիցների տրվել է գումար և Mazda CX5 մակնիշի ավտոմեքենաներ շահելու հնարավորություն և այդ խաղարկությունների ընթացքում մասնակիցները շահել են սահմանափակ թվով Mazda CX5 մակնիշի ավտոմեքենաներ և տարբեր չափի գումարներ: Գովազդ 2-ը վերաբերում է «Վայրի Արևմուտք» անվանումով ակցիային, որը գործել է 2022 թվականի մարտի 2-ից մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը ներառյալ: Նշված ակցիայի ընթացքում խաղաքարտերի կարմիր կամ սև լինելը գուշակելու միջոցով յուրաքանչյուր օր սահմանափակ թվով մասնակիցների տրվել է գումար և Kia Seltos մակնիշի ավտոմեքենաներ շահելու հնարավորություն և այդ խաղարկությունների ընթացքում մասնակիցները շահել են սահմանափակ թվով Kia Seltos մակնիշի ավտոմեքենաներ և տարբեր չափի գումարներ: Բացի այդ Գովազդ 1-ում և Գովազդ 2-ում նշվել է, որ մասնակիցներին ամեն օր տրվում է 4

անվճար շանս, սակայն «adjarabet.am» ֆեյսբուքյան էջում հրապարակված տեսանյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ նշված շանսերից միայն մեկն է եղել անվճար, իսկ մնացած 3 շանսերը մասնակիցները կարողացել են օգտագործել իրենց խաղային հաշիվներն առնվազն 1000 դրամ լիցքավորելու դեպքում: Նշված ակցիաների ընթացքում տեղի ունեցած խաղարկությունների ընթացքում iPhone տասներեք հեռախոսներ չեն խաղարկվել:

ՊԵԿ-ի տրամադրած տեղեկության վերլուծության համաձայն՝ 2021 թվականին Ընկերությունը ձեռք է բերել հատ iPhone տասներեք հեռախոսներ, իսկ 2022 թվականի հունվարի 1-ից մինչև մայիսի 24-ն ընկած ժամանակահատվածում՝ հատ iPhone տասներեք հեռախոսներ:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը հակասում է սույն օրենքին, այլ օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ գործարար շրջանառության սովորույթներին, խախտում է տնտեսավարող սուբյեկտների միջև կամ վերջիններիս ու սպառողների կամ ձեռք բերողների միջև բարեխղճության՝ ազնվության, արդարության, ճշմարտության և (կամ) անաչառության սկզբունքները:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցությունն արգելվում է: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն են սույն օրենքի 17-24-րդ հոդվածներում նախատեսված դեպքերը, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող այլ գործողությունները:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցություն է համարվում հասարակության մոլորեցումը, այդ թվում՝

1) ցանկացած գործողություն կամ վարքագիծ, որը մոլորեցնում է կամ կարող է մոլորեցնել հասարակությանը տնտեսավարող սուբյեկտի, նրա գործունեության կամ առաջարկած ապրանքների, դրանց գովազդմանը, տարածմանը կամ իրացմանը նպաստող միջոցառումների, ապրանքի աշխարհագրական ծագման կամ Օրենքի 20-րդ հոդվածում թվարկված բնութագրերի կամ պայմանների վերաբերյալ:

2) ապրանքների որակն անհիմն չափազանցելը կամ որակի, քանակի կամ այլ բնութագրերի կամ ապրանքների ձեռքբերման կամ իրացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն չհիշատակելը կամ տեղեկատվությունն այն ձևով ներկայացնելը, որը կարող է հանգեցնել թյուր տպավորության ստեղծման (ապակողմնորոշման):

3) գովազդի մեջ (գովազդելու ընթացքում) կամ իրացման ընթացքում թերի կամ կեղծ կամ ոչ լիարժեք տվյալների (տեղեկությունների) նշումը կամ այնպիսի տվյալների (տեղեկությունների) բացակայությունը կամ տվյալների (տեղեկությունների) այն ձևով նշումը, որն սպառողին հնարավորություն չի տալիս ամբողջական պատկերացում կազմելու իրացվող կամ գովազդվող ապրանքի կամ տնտեսավարող սուբյեկտի վերաբերյալ:

4) օրենքին հակասող, այդ թվում՝ անբարեխիղճ կամ հակաօրինական կամ հավաստիության կամ պատշաճության խախտմամբ իրականացվող գովազդները, որոնք

կարող են կանխել, սահմանափակել կամ արգելել տնտեսական մրցակցությունը կամ վնասել սպառողների շահերը:

Տվյալ դեպքում Ընկերության կողմից հրապարակվել է.

1. «Սլոթ Նինջա» անվանումով ակցիայի վերաբերյալ «400 iPhone տասներեքներ, 6 թույն ամենազնաց, ինչպես նաև անսահմանափակ Mazda CX5 և քեշ ամենօրյա խաղարկություններում և՛ սպորտում, և՛ սլոթերում» բովանդակությամբ գովազդ այն դեպքում, երբ այդ ակցիայի ընթացքում խաղարկված գումարները, Mazda CX5 ավտոմեքենաների քանակները եղել են սահմանափակ, այդ ակցիայի ընթացքում գովազդվող 4 անվճար շանսերից միայն մեկն է եղել անվճար, իսկ մնացած 3 շանսերը մասնակիցները կարողացել են օգտագործել իրենց խաղային հաշիվներն առնվազն 1000 դրամ լիցքավորելու դեպքում, այդ ակցիայի ընթացքում տեղի ունեցած խաղարկությունների ընթացքում ամենազնացներ և iPhone տասներեք հեռախոսներ չեն խաղարկվել:

2. «Վայրի Արևմուտք» անվանումով ակցիայի վերաբերյալ «Հրաձիգներ ենք փնտրում, կրակոտ շահումներ ենք խոստանում, լիցքավորիր ատրճանակդ ու կրակիր մեզաշահումներ, 4 նոր բնակարան Երևանում, 4 շքեղ ամենազնաց, 400 iPhone 13 և անսահմանափակ Kia Seltos-ներ ամենօրյա խաղարկությանը: Շահիր օրական 4 անվճար շանսով, [adjarabet.am](http://adjarabet.am) միշտ ստացիր ավելին» բովանդակությամբ գովազդ այն դեպքում, երբ այդ ակցիայի ընթացքում խաղարկված գումարները, Kia Seltos ավտոմեքենաների քանակները եղել են սահմանափակ, այդ ակցիայի ընթացքում գովազդվող 4 անվճար շանսերից միայն մեկն է եղել անվճար, իսկ մնացած 3 շանսերը մասնակիցները կարողացել են օգտագործել իրենց խաղային հաշիվներն առնվազն 1000 դրամ լիցքավորելու դեպքում, այդ ակցիայի ընթացքում տեղի ունեցած խաղարկությունների ընթացքում ամենազնացներ և iPhone տասներեք հեռախոսներ չեն խաղարկվել:

Բացի վերոշարադրյալը Ընկերության կողմից հրապարակված «Սլոթ Նինջա» և «Վայրի Արևմուտք» անվանումներով և այլ ակցիաների վերաբերյալ գովազդների բովանդակությունները սպառողներին առերևույթ թույլ չեն տալիս ամբողջական պատկերացում կազմել գովազդվող ակցիաների պայմանների վերաբերյալ: Նման պայմաններում Ընկերության վարքագիծն առերևույթ պարունակում է հասարակության մոլորեցման դրսևորումներով անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ:

Օրենքի 92-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման համար Հանձնաժողովն իրավասու է տնտեսավարող սուբյեկտներին, պետական մարմիններին և դրանց պաշտոնատար անձանց տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք:

Օրենքի 93-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ անբարեխիղճ մրցակցության համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսավարող սուբյեկտի՝ տվյալ իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև հինգ տոկոսը:

Օրենքի 93-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն հոդվածով նախատեսված տուգանքների չափը կազմում է իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12

ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի նկատմամբ սույն հոդվածում նախատեսված տոկոսը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների հատկանիշների առկայությունը պարզելու նպատակով հարուցել վարույթ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 79-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 83-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. «Կաբարկո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտումների վերաբերյալ հարուցել վարույթ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. հունիսի 7  
Երևան